ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-460-06.12.2022-ԱռՀ-011/0), <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460[1]-06.12.2022-ԱռՀ-011/0), <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460[2]-06.12.2022-ԱռՀ-011/0), <<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-460[3]-06.12.2022-ԱռՀ-011/0) օրենքների նախագծերի փաթեթի նախնական քննարկման համար ներկայացված առաջարկների

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարություն	<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> *(Պ-460-06.12.2022-ԱռՀ-011/0) օրենքի նախագիծ*	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 57-րդ կետը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «57) **հսկիչ գնում՝** Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնի կողմից խախտումները բացահայտելու նպատակով կատարված գնում:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ կառավարություն	<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> *(Պ-460-06.12.2022-ԱոՀ-011/0) օրենքի նախագիծ*	Նախագծի 2-րդ հոդվածի անհրաժեշտությունը բացակայում է, ուստի առաջարկում ենք այն առհասարակ հանել նախագծից: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: «Տեսչական մարմինների մասին» օրենքի 6-րդ հոդվածով սահմանված են Տեսչական մարմնի նպատակը և լիազորությունները, ընդ որում հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իր վերահսկողության ոլորտում անվտանգության և (կամ) օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է, որին համապատասխան՝ տեսչական մարմինն իրականացնում է օրենքով սահմանված լիազորությունները: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Նախագծի 2-րդ հոդվածով, ըստ էության, որևէ նոր կարգավորում չի սահմանվում, իսկ գործող օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասն իր մեջ արդեն իսկ ներառում է Տեսչական մարմնի կողմից դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող բոլոր վերահսկողական գործառույթները (այդ թվում և Նախագծով շարադրվող հիմքերը): Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածից հետո մնացած հաջորդական հոդվածները վերահամարակալել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> *(Պ-460-06.12.2022-ԱոՀ-011/0) օրենքի նախագիծ*	Նախագծի 3-րդ հոդվածով իրավական որոշակիությունն ապահովելու, գործնականում հնարավոր տարընթերցումներից և չարաշահումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք նախագծով սահմանել հսկիչ գնում իրականացնելու **հստակ դեպքեր և հիմքեր՝** նվազագույնի հասցնելով Տեսչական մարմնի կողմից հայեցողական որոշումներ կայացնելու հնարավորությունը: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Սահմանված ձևակերպումները բավականին լայն են և հնարավորություն են տալիս Տեսչական մարմնին առհասարակ, օրենքով իրեն վերապահված ցանկացած գործառույթ իրականացնելիս, ինչպես	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 4-8-րդ մասերով:	Ընդունվել է:

		նաև տեղեկատվություն ստանալիս կատարել հսկիչ գնում, ինչը կարծում ենք, խնդրահարույց է և գործնականում չարաշահումների տեղիք կարող է տալ: Վերոգրյալից զատ, հարկ է նշել, որ օրենքով հսկիչ գնում իրականացնելու կոնկրետ դեպքեր չեն սահմանվում, նույնը վերաբերում է նաև հսկիչ գնում իրականացնելու կարգին, մասնավորապես՝ նախագծով Կառավարությունն է լիազորվում սահմանել հսկիչ գնում իրականացնելու կարգ, ուստի նախագծով սահմանվող ձևակերպումը վերանայման կարիք ունի՝ իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով: Խնդրահարույց է նաև տեսչական մարմնի **կողմից նախկինում իրականացված վերահսկողության արդյունքների տվյալների հիման վրա իրականացված վերլուծությունների** արդյունքում հսկիչ գնում իրականացնելու հնարավորության սահմանումը, քանի որ սահմանվող կարգավորման արդյունքում վերլուծության ցանկացած արդյունք կարող է հիմք հանդիսանալ հսկիչ գնում իրականացնելու համար, ինչը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին: Միաժամանակ, սահմանվող կարգավորումների արդյունքում ստացվում է, որ Տեսչական մարմինը իրականացվող ստուգման արդյունքում կարող է իրականացնել հսկիչ գնում, որի արդյունքում տնտեսվարող սուբյեկտի մոտ բացահայտված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ևս մեկ անգամ ստուգում իրականացնելու համար, ինչը հակասում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված սկզբունքներին, որոնցով արդեն իսկ հստակ նախատեսված են ստուգման հիմքերը, հաճախականությունը, ինչպես նաև օրենսդրի կողմից սահմանված են **կրկնակի ստուգում և վերստուգում իրականացնելու դեպքերը:**		

ՀՀ կառավարություն	<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> *(Պ-460-06.12.2022-ԱոՀ-011/0) օրենքի նախագիծ*	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 29.1-ին հոդվածի ամբողջ տեքստում «առողջապահության ոլորտում» բառերն առաջարկում ենք փոխարինել «դեղերի շրջանառության ոլորտում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> *(Պ-460-06.12.2022-ԱոՀ-011/0) օրենքի նախագիծ*	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 29.1-ին հոդվածի 1-ին մասում «օրենքով սահմանված դեպքերում և կարգով» բառերն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> *(Պ-460-06.12.2022-ԱոՀ-011/0) օրենքի նախագիծ*	Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 24-րդ հոդվածում լրացվող 15-րդ մասը խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասի և ՎԻՎՕ-ի 24-րդ հոդվածի 2-րդ պարբերության տեսանկյունից, ուստի առաջարկվող կարգավորումը վերանայման կարիք ունի: Վերոգրյալը վերաբերում է նաև Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 24-րդ հոդվածում լրացվող 16-րդ մասին և Նախագծի 5-րդ հոդվածին:	Ընդունվել է: Դրանից բխող ՎԻՎՕ-ի նախագծը լրացվել է 3-րդ հոդվածով <<Հոդված 3. <<Օրենսգրքի 47 .3-րդ հոդվածի 22-րդ մասից հանել <<1-ին>> բառը:>>:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Պ-460[1]-06.12.2022-ԱոՀ-011/0) օրենքի նախագիծ*	Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «բացառությամբ» բառը՝ հաշվի առնելով, որ վերոնշյալ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում (նախադասության սկզբում) արդեն իսկ «բացառությամբ» բառը նշված է և նախադասության մեջ կրկին անգամ նշելը կարող է առաջացնել տարընթերցման խնդիր:	Չի ընդունվել է:	Չի ընդունվել:

Նարեկ Զեյնալյան	<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> *(Պ-460-06.12.2022-ԱոՀ-011/0) օրենքի նախագիծ*	Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ մասերով. 4. Հսկիչ գնումն իրականացվում է դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի հրամանի հիման վրա: Հրամանում նշվում են տնտեսավարող սուբյեկտի (սուբյեկտների) լրիվ անունը (անունները) կամ անվանումը (անվանումները), հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, ժամկետները, վայրը (վայրերը) կամ ինտերնետային կայքը, որտեղ իրականացվելու է հսկիչ գնումը և հսկիչ գնում իրականացնող տեսուչի տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը): 5. Հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: 6. Հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի հրամանի պատճենը հսկիչ գնումն իրականացնելուց հետո հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին կամ տնտեսավարող սուբյեկտի այլ ներկայացուցչի: 7. Հսկիչ գնման արդյունքներով կազմվում է դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից սահմանված արձանագրություն՝ երկու օրինակից: Հսկիչ գնման արձանագրությանը կարող են կցվել լուսանկարներ, փաստաթղթեր, էլեկտրոնային կրիչներ և (կամ) այլ նյութեր, որի վերաբերյալ արձանագրության մեջ կատարվում է համապատասխան նշում: Արձանագրությունն ստորագրում են հսկիչ գնում կատարող անձը և տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		վաճառող, առաքող կամ հանձնող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող անձը: Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ առարկություն ունենալու դեպքում արձանագրությունն ստորագրող անձն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին: 8. Հսկիչ գնումները ֆինանսավորվում են պետական բյուջեով դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համար նախատեսված միջոցների հաշվին, իսկ հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը հաստատում է:>>:		
Նարեկ Զեյնալյան	<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> *(Պ-460-06.12.2022-ԱոՀ-011/0) օրենքի նախագիծ*	Նախագծի անցումային դրույթներով սահմանել օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը: 5. Եզրափակիչ մաս եվ անցումային դրույթ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ **եռամսյա** ժամկետում:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Նարեկ Զեյնալյան	<<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-460[3]-06.12.2022-ԱռՀ-011/0) օրենքի նախագիծ	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ հոդվածով. <<Հոդված 3. <<Օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 22-րդ մասից հանել <<1-ին>> բառը:>>:	Ընդունվել է:	Ընդունվել է: